24.01.2013

ՀՀ Նախագահի թեկնածու Արման Մելիքյանի 24.01.2013թ.
ֆեյսբուքյան գրառման կապակցությամբ

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղեկացնում է, որ ՀՀ Նախագահի թեկնածու Արման Մելիքյանի 15.01.2013թ. դիմումի հիման վրա ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2013թ. հունվարի 18-ին կայացրել է թիվ 32-Ա որոշումը: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. հունվարի 18-ի 15.00-ի հերթական նիստում նախատեսված էր Արման Մելիքյանի դիմումի քննարկումը, սակայն, իր իսկ խնդրանքով, հարցի քննարկումը տեղափոխվել է նույն օրը 18.00-ի արտահերթ նիստ:

Դիմումի քննության օրվան հաջորդող առաջին իսկ աշխատանքային օրը՝ 21.01.2013թ.-ին, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումն ուղարկվել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն: Նշված որոշումը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն ստացվել է 22.01.2013թ.-ին, իսկ 23.01.2013թ.-ին ՀՀ Նախագահի թեկնածու Արման Մելիքյանին են ուղարկվել համապատասխան տեղեկությունները:

Նշվածից ակնհայտ է, որ ՀՀ Նախագահի թեկնածու Արման Մելիքյանի դատողություններն առ այն, որ «երեկվա դրությամբ (նկատի ունի 23.01.2013թ.) դիմումը դեռ տեղ չէր հասել», մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը:

Վերոգրյալ փաստական հանգամանքներով պայմանավորված՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն անհիմն ու անընդունելի է համարում ՀՀ Նախագահի թեկնածու Արման Մելիքյանի գնահատականները՝ իբր իր դիմումի պատասխանի «հատուկ ձգձգման» վերաբերյալ:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով